ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«27» 07 2020թ. N 20/570

«ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ

Կ. Աբրահամյանին

ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 29

Էլ. հասցե՝ salesarmplast@gmail.com

ՀՎՀՀ 01566434

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11 (11/65-2020) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 18.03.2020թ. կնքված N 1 (11/234-2020) համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 30.04. 2020թ. մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները՝ (N 62 չափաբաժնով՝ 138000 (հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 40 հատ դռան փականներ, որից մասնակի մատակարարվել է՝ 86250 (ութսունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 25 հատ դռան փականներ, իսկ 51750 (հիսունմեկ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 15 հատ դռան փականներ մինչ օրս չի մատակարարվել և 22.07.2020թ. գրությամբ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել վերոհիշյալ ապրանքը:

Համաձայն Պայմանագրի 2.1.7.-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի՝ «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1. կետի «բ» ենթակետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեակացնում ենք, որ «ԲԻԳ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 13800 (տասներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (համարայնագրի՝ նշված չափաբաժնի ընդհանուր գումարի 10%-ը):

Ա. Հակոբյան

Կատարող՝ Լ. Խաչատրյան
Հեռ. (015) 579-487